Արձանագրություն 3

«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ՍՄՆՀԴ-ԷԱՃ-ԱՊՁԲ -19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.01.2019թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ալավերդյան – «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ

Անդամներ

Մ. Ավագյան- Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի վիճակագիր

Ա. Պետրոսյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի գործավար

*Քարտուղար-գնումների համակարգող*

Ռ. Մկրտումյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի տնտեսագետ

1. <u>ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների,ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով կազմակերպության ՀՎՀՀ-ն:

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Կապանի Հաց» ՍՊԸ-ն և «ՍՅՈՒԽՈՒՄԱ» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.2 «ՍՄՆՀԴ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգով առաջին տեղ զբաված մասնակիցներ ճանաչված «ՍՅՈՒԽՈՒՄԱ» ՍՊԸ-ն , սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ «Կապանի Հաց» ՍՊԸ-ի կողմից հավելված 3 կցված չէր տրվել է շտկելու անհամապատասխանությունը, սահմանված ժամկետում «Կապանի Հաց» ՍՊԸ-ն շտկել է անհամապատասխանությունը, որի համաձայն առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

-Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Էլեկտրոնային աճուրդի միջոցով գնումներ կատարելու գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄՆՀԴ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիների հայտի գնահատման արդյունքները և հայտերը գնահատել <<բավարար>>.

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

3. Հաստատել «ՍՄՆՀԴ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնումներ կատարելու գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄՆՀԴ-ԷԱՃ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ են ճանաչվել «Կապանի Հաց» ՍՊԸ-ն և «ՍՅՈՒՌՄԱ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ.

- 1-41 և 43-48-րդ չափաբաժինների համար ՍՅՈՒՌՄԱ ՍՊԸ-ին,
- 42-րդ չափաբաժնի համար Կապանի Հաց ՍՊԸ-ին,

4.2 հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ 10 օրացուցային օր է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | | Ա. Ալավերդյան |
| հանձնաժողովի անդամներ՝ | | Մ. Ավագյան |
| | | Ա. Պետրոսյան |
| Գնումները համակարգող ՝ | | Ռ.Մկրտումյան |